# Քրիստոնյա Հայաստան

2001, ԱՊՐԻԼ Բ, ԹԻՎ 8 (100)

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ


## ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ ՏԵՐ ՏԵՐ ԳԱՐԵԳԻՆ Բ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ

## ՀԱՅՈՑ ԵՂԵՌՆԻ 86-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻ ԱՌԻԹՈՎ

**ԴԵՐ ԶՈՐ**
**24 ապրիլի, 2001 թ.**

*«Որ զանձինս իւրեանց քեզ, Հայր, ընծայեցին եւ Որդւոյ քում Քրիստոսի եղեն խաչակիցք»:*



Այստեղ եկանք Մեր հոգու հայացքի առջեւ Արեւմտյան Հայաստանի օրհնյալ հողը, Սուրբ Մասյաց փեշերին այրվող այգեստաններ, խողխողված մանուկ ու ծեր, դեպի անապատ քշվող անզեն ու տանջահար ժողովուրդ: Անցանք ափերով Եփրատի, որի ջրերը կյանք բաշխելու փոխարեն Հայոց լեռնաշխարհից դիակ ու արյուն էին բերում 86 տարիներ առաջ եւ սարսափ էին գուժում ու մահ: Արագընթաց մեքենաներով կտրեցինք անեզր տափաստանը, որը, դուք՝ բյուր նահատակներ հայոց, չափեցիք քայլ-քայլ եւ խաչը ուսած՝ անցաք Գողգոթայի ճանապարհով:

Եկել ենք, որպես շնորհընկալ Ամենայն Հայոց Հայրապետ, առաջին անգամ հանուն մեր նախորդների այսօր խորին խոնարհումով ծնրադրելու եւ մայր հայրենիքի ու Սուրբ Էջմիածնի օրհնությունը բաշխելու շիկացույն այս հողին, որը, ժամանակին անջուր ու անմարդաբնակ, հավաքական ձեր գերեզմանը դարձավ ու սրբագործվեց մարտիրոսյալ ձեր արյամբ՝ նվիրական դառնալով համայն հայոց համար:

Անապատի տոթակեզ քամին ավազով ծածկեց անթաղ մնացած ձեր աճյունները: Բայց մի՞թե Բարձրյալի աչքից կարելի է թաքցնել մարդկային չարիքը, մարդկային ամոթը: Մի՞թե ոճրապարտ մտքով ու ձեռքով գործվածը, որ սրատեց ու բնավեր արեց ստեղծարար հնագույն մի ժողովրդի, կարող է մոռացության շղարշով պատվել ու ջնջվել սերունդների հիշողությունից:

Եկել ենք հանուն համայն հայ ժողովրդի, որը աշխարհի բոլոր ծագերում այսօր՝ ապրիլի 24-ին, համախումբ ու միասնական ոգեկոչում է նահատակների սուրբ հիշատակը: Այսօր բազմահազար հայորդիներ, Հայաստանի Հանրապետության նախագահի գլխավորությամբ, Ծիծեռնակաբերդի բարձունքում խոնարհվում են ձեր հիշատակը հավերժացնող կոթողի առջեւ:

Եկել ենք ուղեկցությամբ աշխարհասփյուռ մեր զավակաց, ովքեր՝ շառավիղները նախճիրից փրկվածների, աշխարհի չորս կողմերում հայ կյանքը վերահաստատած, պատմական մեր հայրենիքի արեւելյան մի հատվածում Հայաստանի ազատ պետությունը վերականգնած՝ այսօր նախանձախնդիր են հայոց ցեղասպանության ճանաչման հարցում, որպեսզի ոչ մի ժողովուրդ չապրի երբեք սեփական պատկանելության համար կոտորածի ողբերգությունն ու վիրավորանքը եւ չկառուցի Դեր Զոր, Ծիծեռնակաբերդ ու Եաո Վաշեմ, որպեսզի ոչ մի հողում չլինեն Մայդանեկ ու Բուխենվալդ:

Սուրբ Էջմիածնի 1700-ամյա Միածնաէջ Լուսե Խորանի օրհնությունն ենք բերել նահատակներիդ նշխարներին, Սուրբ Լուսավորչի կանթեղի լույսը մշտառողբ: Եկել ենք ուխտի, սրբազան երդման: Եկել ենք ձեր՝ Քրիստոսի խաչակիցներիդ հազարավոր անհայտ անունների հիշատակումով մեր ուխտը առ Աստված հաստատելու, համազգային մեր միասնականությունը նորոգելու եւ մեր հավատը զորացնելու արդարության հաղթանակի հանդեպ: Եկել ենք ասելու ձեզ, որ ամեն ապրիլի 24-ի, նաեւ այսօր, հայ ընտանիքներում զավակներ են ծնվում՝ հայորդիներ ու հայուհիներ, որ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու ավազանում մկրտվում են ձեր անուններով:

Միրելի ժողովուրդ հայոց ի սփյուռս աշխարհի:

Շարունակությունը էջ 2

ՀԱՅՈՑ ՄԵԾ ԵՂԵՌՆ - 86

## ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹՅՈՒՆ ԴԵՐ ԶՈՐ

**Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ Ամենայն Հայոց եւ Ն. Ս. Օ. Տ. Տ. ԱՐԱՄ Ա Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսների հովանավորությամբ եւ գլխավորությամբ ապրիլի 23-25-ը տեղի ունեցավ ուխտագնացություն Դեր Զոր:**

Ամենայն Հայոց Հայրապետի գլխավորությամբ հոգեւորականության, իշխանության, գիտության ու մշակույթի ներկայացուցիչներից բաղկացած շուրջ 40-հոգանոց ուխտագնացների խումբը մեկնեց Հալեպ:

Ըստ պատմական աղբյուրների՝ հայերը դեռ վաղ միջնադարից են բնակվել այստեղ, սակայն համայնքը որպես այդպիսին ձեւավորվել է 14-րդ դարից: Ստեփանոս քահ. Կրակցիի 1329 թ. ձեռագիր հիշատակարանից տեղեկանում ենք, որ այդ շրջանում Հալեպում արդեն գործում էր հայկական Ս. Աստվածածին եկեղեցին, ուր հայերը մատուցում էին իրենց աղոթքը, իսկ ավելի ուշ՝ 16-17 դարերում, Հալեպում գործում էր դպրատուն, որտեղ աշխատած գրիչների գործերից պահպանվել եւ մեզ են հասել 200-ից ավելի ձեռագրեր, հայ վարպետների որմնանկարներ, սրբապատկերներ, մանրանկարներ: Հալեպահայ ազգային հետագա կյանքը կազմակերպել են Ռուբինյան (1846), Ուսումնասիրաց (1880) եւ Դպրասեր տիկնանց (1898) միությունները: Ձեւավորված այս համայնքին վերջին 3-4 դարերի ընթացքում, մեզ հայտնի պատճառներով, առաջին անգամ էր այցելություն տալիս Ամենայն Հայոց կաթողիկոսը:

Քաղաքի օդանավակայանում Հայաստանից մեկնած մեր ուխտավորներին դիմավորեցին Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Արամ Առաջինը, Բերիո թեմի առաջնորդ Սուրեն արք. Գաբրիելյանը, այլ հոգեւորականներ ու համայնքի ներկայացուցիչներ:

Թափորն օդանավակայանից շարժվեց դեպի Ս. Քառասնից Մանկանց եկեղեցի տանող Ազիզիե փողոցը: Քաղաքի հնագույն, ասես ավետարանական ժամանակների շունչն ու մթնոլորտն իր մեջ անաղարտ պահած, անապատային շիկաներմակ հողե տների ու տնակների մեղմերանգ պատկերներն ու թվացյալ լռությունն անտեսանելի փոխվեցին, երբ թափորը մտավ փողոց: Քաղաքի հայ համայնքն եկել ու ասես գրավել էր փողոցն իր ողջ երկայնքով: Հայոց Հայրապետի, Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսի, Հայաստանից ու Սփյուռքի այլ գաղթօջախներից ժամանած պատվիրակությունների երթն ընդունում էին գնծագին ճիչերով, ծափողջույններով, շենքերի պատշգամբներից, բաց պատուհաններից, տանիքներից թափվող ծաղկաթերթերի, քաղցրավենիքների եւ ընդեղենի տարափով, իսկ տեղ-տեղ փողոցը ներկվում էր մատաղվող գառների ու ոչխարների հեղվող արյամբ: Աննախադեպ այս մթնոլորտի պատճառը, անշուշտ, առաջին հերթին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի գահակալի՝ Ամենայն Հայոց Հայրապետի ներկայության ցանկալի փաստն էր:



Շարունակությունը էջ 2

# ԱՊՐԻԼ 24 ԵՒ ՄԱՅԻՍ 24
## ՆՇՈՒՄՆԵՐ ԵՒ ՃՇԴՈՒՄՆԵՐ

***Տարուան 12 ամիսներու շարքին, կողք կողքի բազմած - ԱՊՐԻԼ եւ ՄԱՅԻՍ - երկու ամիսները յատկանշական են մեզի համար այն իմաստով, որ առանձնապէս եւ յաջորդաբար մեզի կը յիշեցնեն մօտաւոր մեր անցեալի մռա՜յլ թէ պայծա՛ռ օրերը:***

***Համազգային առումով մեզ էապէս սարսո՛ղ եւ սթափեցնո՛ղ, այլեւ զօրեղնող եւ մեծանորոգ. բայց եւ յատկապէս մեզ զգաստութեա՛ն հրաւիրո՛ղ երկու թուականներուն առջեւ պահ մը կանգ կ'առնենք ազգովին ու կը պարտաւորուինք լրջանալու: Եւ 1915-ի Մեծ Եղեռնին՝ մեր ժողովուրդին պատճառուած մահացու հարուածներուն մասին մտածելու, այլ մանաւանդ մեր ազգին գոյատեւման մասին խորհրդածելու:***

***Եւ ասիկա ամէն տարի, ա՛նխափան:***

***Թէեւ իրարմէ անջատ եւ իրարու հակապատկեր. բայց իրարմով ամբողջութիւն մը կը կազմեն՝ զիրար լրացնող այս զոյգ մը թուականները - ԱՊՐԻԼ 24 եւ ՄԱՅԻՍ 24 - որոնք միաժամանակ խորհուրդ մը ունին իրենց մէջ եւ իմաստ մը կու տան մեր Պատմութեան:***

***Առաջինը Սգատօն, երկրորդը Փառատօն:***

***Իւրաքանչիւրի մասին կարգ մը նշումներ ընելէ եւ պատմական ծանօթութիւններ տալէ յետոյ պիտի փորձենք անհրաժեշտ ճշդումները կատարել անոնց մասին:***

***Նախ առաջինը՝ Ապրիլ 24:***

### ԻՆՉՈ՞Ւ ԱՊՐԻԼ 24-ԻՆ ԿԸ ՍԳԱՆՔ ԵՒ ՈՉ ՈՒՐԻՇ ՕՐ

Մեր նորահաս սերունդի տղաքը պէտք է գիտնան, թէ Ապրիլ 24-ը պատահականօրէն նշանակուած օր մը չէ՝ համազգային մեր սուգին համար:

Ապրիլ 24-ը մեր սուգին ամբողջ խորհուրդը ընդգրկող եւ համահայկական կոտորածին ազդանշանը տուող օրն է:

Այդ օրն էր, որ Մեծ Եղեռնի ահազանգը տրուեցաւ մեզի, ու մենք զգացինք, թէ կը գտնուէինք ամբողջական բնաջնջումի ահաւոր աղէտի նախօրեակին:

Բայց աւելի ճիշդ բացատրութեամբ, Ապրիլ 24-ը Թուրքիոյ հայութեան գլխատմա՛ն օրն է: Այդ օրը՝ 1915, Ապրիլ 24-ին, մեր ժողովուրդին ղեկավար դասը կազմող շուրջ 300 մտաւորականներու փաղանգը. այլ խօսքով՝ ԻՄԱՍՏՈՒՆ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆԸ ԱԶԳԻՆ, բռնօրէն խլուեցաւ մեր ժողովուրդէն, ու մենք մնացինք անգլուխ...

Իթթիհատական երիտասարդ թուրքեր մսավաճառներո՛ւ յատուկ ոճով, ինչպէս օրինակ սպանդանոցներու մէջ մսացու կենդանիները նախ կը գլխատեն, եւ ապա մարմինը կը կտրտեն - մասերու կը բաժնեն. այսպէս ուրեմն՝ սպանդանոցային ոճով, նախ գլո՛ւխը կտրեցին այս ժողովուրդին. եւ ապա բզկտեցի՛ն - բզկտե՛լ տուին մարմինը, անոր հետք իսկ չքացնելու դիւային մտածումով:

Եւ խորհիլ որ այդ գլխատումը կատարուեցաւ գաղտնօրէն, շա՛տ ծածուկ եւ լո՛ւռ դաւադրութեամբ... գիշերուան մթութեան մէջ, մարդկային աչքերէն հեռու:

Ահա այս ուղի՛ղ բացատրութեամբ պէտք ըսենք ուրեմն, որ Թուրքիոյ հայութեա՛ն - արեւմտահայութեան ԳԼԽԱՏՄԱՆ ՕՐՆ է՝ 1915, Ապրիլ 24-ը:

### Ե՞ՐԲ ԵՒ ԻՆՉՊԷ՞Ս ԱԶԳԱՅԻՆ ՍԳԱՏՕՆ ՃԱՆՉՑԱԾ ԵՆՔ ԱՊՐԻԼ 24-Ը, ԵՒ Ո՞Վ ՆՈՒԻՐԱԿԱՆԱՑՈՒՑ ԶԱՅՆ

Մեծ Եղեռնի մեր բիւրաւոր նահատակներուն սգատօնը առաջին անգամ ըլլալով եւ անպաշտօն կերպով տեղի ունեցած է՝ 1918, Նոյեմբեր ամսուան, Զինադադարէն յետոյ, Հալէպի Սրբոց Քառասնից Մանկանց եկեղեցւոյ մէջ:

Այդ օրը՝ Ս. Պատարագէն յետոյ, կատարուած է հոգեհանգիստ՝ համայն հայ ննջեցեալներուն համար, որոնք նահատակուեցան Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքին:

Հոգեհանգստեան արարողութենէն յետոյ բոլոր հաւաքուածները, թափօր կազմած, ուղղուած են դէպի գերեզմանատուն, հո՛ն եւս կատարելու համար կրօնական պաշտամունք:

**Իսկ յաջորդ տարի՝ 1919-ին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Ամենայն Հայոց կաթողիկոս Գէորգ Ե. Սուրէնեան հայրապետական յատուկ կոնդակով մը կը հրահանգէ բովանդակ հայութեան՝ համազգային սուգի օր ճանչնալ ԱՊՐԻԼ 24-ը, քանի որ ա՛յդ օրն էր, որ պոլսահայ մտաւորականներու ձերբակալութեամբ՝ ազդանշա՛նը կը տրուէր համահայկական սպանդին:**

Եւ հայրապետական հրահանգին համաձայն՝ ա՛յդ տարին իսկ - 1919-ին, ի յիշատակ մեր բիւրաւոր նահատակներուն, պաշտօնական սգահանդէս տեղի կ'ունենար Պոլսոյ մէջ՝ Ապրիլ 25-ին, Ուրբաթ օր:

Փոխանակ Ապրիլ 24-ի՝ հաւանաբար դիտումնաւոր կերպով Ապրիլ 25-ին կատարուած է սգահանդէսը, Ուրբա՛թ օրուան բերելու համար զայն - թուրքերու «Կիրակի»ին:

Այսպէս ուրեմն՝ պաշտօնական սգատօնը առաջին անգամ տեղի կ'ունենար Պոլսոյ մէջ՝ 1919-ին:

Եւ այնուհետեւ ԱՊՐԻԼ 24-ը ճանչցած ենք մենք ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՍՈՒԳԻ ՕՐ:

### ԼՈՒՍԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՄԸ ԵՒՍ ԱՅՍ ՊԱՐԳԱՅԻՆ

Անցեալին, եւ դեռ մինչեւ 1923 թուականը, մեր եկեղեցական տօներուն համար կը կիրարկուէր հին տոմարը: Եւ նահատակաց սգատօնը կը կատարուէր Ապրիլ 11-ին՝ հին տոմարով. որ է ըսել՝ նոր տոմարով Ապրիլ 24:

Ամենայն Հայոց կաթողիկոս Գէորգ Ե. Սուրէնեան 1923, Նոյեմբեր 9 թուակիր եւ 349 թուահամար իր կոնդակով կը հրահանգէր նոր տոմարի դրութիւնը կիրարկել ազգային-եկեղեցական տօներուն համար:

Եւ այդ օրէն ասդին՝ 1923-էն ի վեր մենք կը գործածենք նոր տոմարը: Թէեւ Երուսաղէմի հայոց վանքի միաբանութիւնը կը շարունակէ տակաւին կիրարկել հին տոմարի դրութիւնը:

Ահա թէ ինչու, գիրքերու մէջ Ապրիլ 24-ը երբեմն կը նշուի երկու թուականներով՝ 11/24 Ապրիլ: Պէտք հասկնանք, թէ հին տոմարով 11 Ապրիլը, նոր տոմարով՝ Ապրիլ 24 է: Տարբերութիւնը՝ 13 օր:

Իսկ հին տոմարը մեզի համար դադրած է այլեւս գործածութենէ:

*ԹՈՐԳՈՄ ՎԵՀԱՊԵՏԵԱՆ*
*«Հայ ոգին սլա՛ցքը...» գիրքէն*

# ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## Ապրիլի 21-ին Գարեգին Բ կաթողիկոսը մեկնեց Մոսկվա

Ապրիլի 21-ին՝ առավոտյան, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսը մեկնեց Մոսկվա՝ Մոսկվայի եւ Համայն Ռուսիո պատրիարք Ալեքսի Երկրորդի հետ նախագահելու հաջորդ օրը Կրեմլի մեծ դահլիճում կայանալիք՝ Հիսուս Քրիստոսի Հարության հրաշափառ տոնին եւ քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակման 1700-ամյակին նվիրված հանդիսությանը: Վեհափառ Հայրապետին Մոսկվա ուղեկցեցին Հայաստանի եւ արտերկրի թեմակալ առաջնորդներ:

## Ի հիշատակ հայոց եղեռնի զոհերի

Ապրիլի 24-ին՝ հայոց ցեղասպանության հիշատակի օրը, Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում մատուցվեց սբ. պատարագ: Պատարագիչն էր Տ. Մակար վրդ. Հովհաննիսյանը: Սրբազան արարողության ընթացքում հավատացյալներին իր խոսքն ուղղեց Տ. Շահե արք. Աճեմյանը:

Սբ. պատարագի ավարտին կատարվեց հոգեհանգստյան արարողություն Մայր տաճարի տարածքում գտնվող 1915 թ. եղեռնի անմեղ նահատակների հիշատակը հավերժացնող կոթողի մոտ:

## Գարեգին Բ կաթողիկոսն ընդունեց ԿԱ պայմանագրի անդամ պետությունների անվտանգության խորհրդի քարտուղարներին

Ապրիլի 27-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսն ընդունեց Կոլեկտիվ անվտանգության պայմանագրի անդամ պետությունների անվտանգության խորհրդի քարտուղարների հանձնաժողովի երեւանյան նիստի մասնակիցներին:

Նորին Սրբությունը, ողջունելով հյուրերին, գոհունակությամբ անդրադարձավ անվտանգության եւ խաղաղության պահպանման նպատակով տարբեր պետությունների միջեւ գոյություն ունեցող փոխհամագործակցությանը, ինչի շնորհիվ առավել հեշտությամբ կարելի է հաղթահարել ցանկացած ներազգային ու ներպետական խնդիր:

Հանդիպման ընթացքում ՀՀ նախագահին առընթեր ազգային անվտանգության խորհրդի քարտուղար Սերժ Սարգսյանը Վեհափառ Հայրապետին ներկայացրեց երեւանյան նիստի նպատակներն ու արդյունքները: Ապա Ամենայն Հայոց Հայրապետը հյուրերի խնդրանքով պատասխանեց նրանց բազմաբնույթ հարցերին՝ մանրամասնորեն անդրադառնալով Հայ եկեղեցու էկումենիկ եւ միջկրոնական հարաբերություններին, կաթոլիկ եւ Ուղղափառ եկեղեցիների հետ դավանաբանական տարբերություններին, ինչպես նաեւ Հայ եկեղեցում պատմականորեն ձեւավորված նվիրապետական աթոռներին:

Վեհափառ Հայրապետը կարեւորեց Հայ եկեղեցու եղբայրական հարաբերությունները քույր եկեղեցիների հետ, ինչպես նաեւ այլ կրոնների հետ տարվող երկխոսությունը՝ մատնանշելով այն պատմական փաստը, որ հայկական համայնքները համերաշխորեն գոյատեւում են այլադավան եւ այլակրոն բազմաթիվ երկրներում: Հյուրերը չափազանց կարեւոր նկատեցին ղարաբաղյան հակամարտության տարիների ընթացքում Ամենայն Հայոց հայրապետների եւ Ադրբեջանի հոգեւոր իշխանությունների միջեւ Ռուս Ուղղափառ եկեղեցու պետ Ալեքսի Բ պատրիարքի միջնորդությամբ շարունակվող երկխոսությունը՝ հանուն հիմնահարցի խաղաղ կարգավորման եւ խաղաղության հաստատման:



Հանդիպման ընթացքում Վեհափառ Հայրապետն իր մտահոգությունը հայտնեց նաեւ Հայաստան ներթափանցած բազմաթիվ աղանդների առնչությամբ, որոնք որեւէ աղերս չունենալով ժողովրդի ավանդույթների եւ պատմության հետ՝ պառակտում են առաջացնում ժողովրդի ներսում, խարխլում ազգային անվտանգության հիմքերը:

Հանդիպման մասնակիցների թվում էին ՌԴ ԱԽ քարտուղար Վլադիմիր Ռուշայլոն, Հայաստանում ՌԴ արտակարգ եւ լիազոր դեսպան Անատոլի Դրյուկովը:

## Ամենայն Հայոց Հայրապետն ընդունեց Սիրիայի դեսպանին

Ապրիլի 28-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսն ընդունեց Հայաստանում Սիրիայի Արաբական Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Համեդ Հասանին:

Հանդիպման ընթացքում խոսվեց Ամենայն Հայոց Հայրապետի Դեր Զոր կատարած ուխտագնացության մասին:

«Մենք խորապես մխիթարված ենք, որ առիթ ունեցանք ուխտի մեկնել Դեր Զոր եւ աղոթք բարձրացնել 1,5 մլն հայ նահատակների համար»,- ասաց Վեհափառ Հայրապետը:

Նորին Սրբությունը, հաղորդելով իր տպավորությունները այցի վերաբերյալ, նշեց այն ջերմ ընդունելությունը, որ ցուցաբերել էին Հալեպի հոգեւոր ու աշխարհիկ իշխանությունները, Հալեպի ողջ ժողովուրդը: Վեհափառ Հայրապետը նշեց նաեւ, որ մեծապես տպավորված է սիրիահայ համայնքի առանձնաշնորհ դիրքով, ինչը երկու ժողովուրդների ամուր բարեկամության արգասիք է:

## Նոր նշանակումներ Հայ Առաքելական Եկեղեցու թեմերում

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի բարձր տնօրինությամբ՝ նոր թեմակալ առաջնորդներ են նշանակվել Հայաստանյայց Առաքելական եկեղեցու երեք թեմերում:

Հայրապետական տնօրինությամբ՝ գերշ. Տ. Գրիգորիս արք. Բունիաթյանը նշանակվել է Հայաստանյայց Առաքելական եկեղեցու Ուկրաինայի հայոց թեմի առաջնորդ՝ զբաղեցնելով թեմակալ առաջնորդի թափուր տեղը:

Նորին Սրբության նույն տնօրինությամբ՝ Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդի պաշտոնակատար հոգշ. Տ. Եզրաս վարդապետ Ներսիսյանը նշանակվել է Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ եւ Մոսկվայի ու Համայն Ռուսիո պատրիարքությունում Հայ եկեղեցու ներկայացուցիչ:

Հարավային Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդական տեղապահ հոգշ. Տ. Մովսես վրդ. Մովսիսյանը Ամենայն Հայոց Հայրապետի տնօրինությամբ ծառայության է կոչվել նույն թեմում՝ որպես առաջնորդ:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*

## ՏԻԽՈՆ ԶԱԴՈՆՍԿԻ

# Մահվան մասին

Մահը կարող է մեղավորին ապաշխարության մղել: Մահը մեզ ծանոթ է եւ անծանոթ. ծանոթ է, քանզի գիտենք, որ բոլորս մահանալու ենք, անծանոթ է, քանզի չգիտենք, թե երբ, ինչպես եւ որտեղ ենք վախճանվելու: Որքան շատ ենք ապրում, այնքան նվազում է մեր կյանքը, եւ կարճանում մեր օրերը, ապա մոտենում ենք մահվան: Եվ արդեն առավել մոտ ենք այդ օրվան, քան երեկ էինք, առավել մոտ ենք այդ ժամին, քան անցյալին: Մահը յուրաքանչյուրին անտեսանելիորեն հետապնդում է եւ հանկարծակիի է բերում այն ժամանակ, երբ իրեն չեն սպասում: Գրեթե բոլոր մարդիկ, առավելաբար նրանք, ովքեր առողջ ու պնդակազմ են, մտովի այսպես են երազում. «Ես դեռ կապրեմ, իմ վախճանը մոտ չէ, հավաքեմ ու վայելեմ իմ կուտակած բարիքները»: Սակայն ահա հանկարծահաս է լինում մահը, եւ այնժամ ի դերեւ են լինում նրա բոլոր երազանքներն ու մտածումները: Շուտով մահանում է նա, ով երկար կյանքի ակնկալիք ուներ: Նա, որ ցանկանում էր կուտակել ու հարստանալ, թողնում է աշխարհը, աշխարհում էլ՝ իր մարմինը: Այնպես որ, քրիստոնյանե՛ր, վերջը հայտնի չէ: Մարդասեր Աստված, մեզ համար հոգալով հանդերձ, անհայտ վախճան է սահմանել մեզ, որպեսզի միշտ պատրաստ լինենք դրան եւ ապրենք կատարյալ զգոնության մեջ: Ինչով մարդ վերանա այս աշխարհից, նրանով իսկ կներկայանա Քրիստոսի դատաստանին: Մեղավորնե՛ր, լավ քննե՛նք այս խոսքը եւ ապաշխարհե՛նք, որպեսզի մեր այս մեղքերով չհեռանանք հավիտենական կյանք եւ ներկայանանք այն դատաստանին: Ողորմած Աստված խոստացել է մեզ հայտնել իր շնորհը եւ ողորմությունը, սակայն վաղվա օր չի խոստացել: Շատ ավելի պետք է անսալ սրան եւ սթափվել քնից եւ հիշելով մեր մահվան մասին՝ շտկել ինքներս մեզ եւ պատրաստվել ելքին, որպեսզի երանելի կերպով վախճանվենք: «Երանի այն մեռյալներին, որոնք այժմվանից իսկ ննջեցին ի Տեր» (Հայտ. ԺԴ 13): Ի Տեր է հանգչում նա, ով ապաշխարության, հավատքի եւ ճշմարիտ աղոթքի մեջ է մահանում: Ամենքի համար այդ ժամն ահավոր է: Բոլոր սրբերն էլ այդ ժամին սպասել ու ողբացել են եւ այդպիսով մարդասեր Աստծո գթությունն են շարժել, որպեսզի իրենց այդ ժամից ազատի: Զարմանալի է, որ սրբերը, այդ ժամը տեսնելով, ողբում են, իսկ մեղավորները, թեպետ ամեն օր տեսնում են իրենց մեռնող եղբորը, չեն ողբում: Խե՜ղճ մեղավորներ, ինչո՞ւ եք ննջում: Ահա սատանան գողի նման հափշտակում է մեր փրկությունը: Դրոշմե՛նք մեր մտքում այդ ժամը եւ պատրաստ լինենք, քանզի այդ ժամից սկսյալ մարդը կա՛մ հավիտյան երանելի, կա՛մ հավիտյան աղքատ կլինի: Այստեղ հավիտենականության դռները յուրաքանչյուրի առջեւ են բացվում՝ գնալու կա՛մ դեպի երջանիկ, կա՛մ դժբախտ հավիտենականություն: Այդ կետից սկսած մարդ կա՛մ հավիտյան է ապրում եւ կա՛մ հավիտյան մահանում: Ո՞ւր են մեզանից առաջ շքեղության, հաճույքների մեջ ապրողներն ու չզղջացողները: Հեռացել են այս աշխարհից եւ իրենց բոլոր զվարճությունները թողել, իրենց տեղերում են գտնվում եւ Վերջին դատաստանին սպասում, ուր իրենց գործերի համար ամբողջությամբ կհատուցեն: Հանուն սրա, քանի դեռ չի մոտեցել այդ ժամը, մաքուր սրտով դիմենք Աստծուն եւ ապաշխարությամբ ու հավատքով հաշտվենք Նրա հետ, որպեսզի հավիտենական կյանք ժառանգենք: Սրա մասին են խրատում եւ աղաչում մեզ սուրբ առաքյալներն իրենց գրվածքներում. «Աղաչում ենք հանուն Քրիստոսի, որ հաշտվեք Աստծո հետ. որովհետեւ Նրան, ով մեղքը չէր ճանաչել, Աստված մեզ համար մեղավոր արեց, որպեսզի մենք Նրանո՛վ Աստծո արդարները լինենք» (Բ Կորնթ. Ե 20-21):

*Ռուսերենից թարգմանեցին*
***Միքայել սրկ. Մելիքյանը եւ***
***Տիգրան սրկ. Բաղումյանը***

# ԽՐԻՄՅԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՁԵՌՔԲԵՐՈՒՄԸ

Արդեն մեկ հարյուրամյակ Մկրտիչ Խրիմյանի անձը, կյանքն ու գործունեությունը հայագիտության սեւեռուն ուշադրության առանցքում են: Խրիմյան Հայրիկի մասին շատ է գրվել: Սակայն եղածը բավական չէ նրա կերպարն ամբողջականությամբ եւ համակողմանիորեն ներկայացնելու համար:

Նաեւ այն պարզ պատճառով, որ ամեն մի սերունդ յուրովի է ներկայացնում մեծանուն հայրենասերի կյանքն ու գործը, թողած դասերն ու պատգամները:

Խրիմյանագիտության մեջ ուշագրավ երեւույթ է պատմագիտության դոկտոր Էմմա Կոստանդյանի «Մկրտիչ Խրիմյան. հասարակական-քաղաքական գործունեությունը» մենագրությունը, որը վերջերս է դրվել հայ ընթերցողի գրասեղանին:

Այն հրաշալի նվեր է ընթերցող հասարակայնությանը Խրիմյան Հայրիկի ծննդյան 180-ամյակի առթիվ:

Հեղինակն օգտագործել է բազմաթիվ արխիվային վավերագրեր, տպագիր սկզբնաղբյուրներ, որոնք էլ ավելի կարեւորում են աշխատության ճանաչողական դերն ու գիտական նշանակությունը:

Աշխատության էջերում համակողմանիորեն ներկայացված են այն ժամանակը, հասարակական-քաղաքական հանգամանքներն ու անցուդարձը, որում ապրեց ու գործեց Խրիմյան մարդն ու ազգային գործիչը: Ճշմարիտ է նկատված, որ գրել Խրիմյան Հայրիկի մասին՝ նշանակում է գրել հայ ժողովրդի՝ 19-րդ դարավերջի եւ 20-րդ դարասկզբի պատմությունը, որն այնքան լեցուն է բախտորոշ իրողություններով, հուսադրող եւ հուսահատեցնող դեպքերով: Հստակ ուրվագծված է Վան-Վասպուրականի սոցիալ-տնտեսական ու քաղաքական կյանքի պատկերը, որտեղ անցել է փոքրիկ Մկրտիչի մանկությունն ու պատանեկությունը: Հայրենի բնաշխարհին ու նրա մարդկանց Խրիմյանը սիրահարված մնաց մինչեւ իր կյանքի մայրամուտը: Այս սերն ու մեծագույն նվիրվածությունն անմիջականորեն է փոխանցվում ընթերցողին, քանի որ հեղինակը, բացի պատմական ճշմարտությունից, գեղարվեստի նրբին լեզվով է ներկայացնում նյութը:

Մ. Խրիմյանի կյանքի ուղին բարդ ու հակասական է այնքանով, որքանով բարդ ու հակասական էր տվյալ դարաշրջանը: Անգամ անձնական կյանքում ուրախություն ու հաջողություն չունեցավ: Շատ կարճ ժամանակում մահացան նրա մայրը, կինը եւ աղջիկը: Մինչեւ հոգու խորքը վշտացած երիտասարդին այլեւս ոչինչ չէր կապում աշխարհիկ կյանքի հետ, ուստի որոշում է ընդմիշտ նվիրվել Հայոց եկեղեցու ծառայությանը: Եվ, հեղինակի դիպուկ բնութագրմամբ, ընտիր ուսուցիչն ու քարոզիչը, խանդավառ հայրենասերը 1854 թ. փետրվարին Աղթամարում կուսակրոնություն է ընդունում, Վանի հոգեւոր առաջնորդ Գաբրիել Շիրոյանի կողմից ձեռնադրվում վարդապետ: Նույն՝ 1854 թ. մարտի 25-ին նա իր վարդապետական առաջին քարոզն է կարդում Վանում, որի բնաբանն էր՝ «Հովիւ քաջ զանձն իւր դնէ ի վերայ ոչխարաց իւրոց»: Դա աստվածաբանական քարոզ չէր, այլ հայրենասիրության ջերմ ներբող, մի հոգեցունց կոչ ու հրավեր, որը թմրած մտքերին եւ հոգիներին արթնության էր կոչում:



Է. Կոստանդյանը նշում է, որ անդրանիկ այս քարոզի բնաբանը եղավ անսակարկ հայրենասերի կյանքի ուղու խորհրդանիշը: Սակայն միայն քարոզներով չէր կարող բավարարվել նա: Ժողովրդի հոգեկան ուժերը ցնցելու համար առավել զորավոր միջոցներ էին պետք, որոնցից առաջնայինը տպագիր խոսքն էր, պարբերական մամուլը:

Նրա անդուլ ջանքերով 1855 թ. հունիսին լույս աշխարհ եկավ «Արծուի Վասպուրական» ամսագիրը, որի հոդվածների ու նյութերի ահռելի բաժինը գրում էր ինքը՝ խմբագիր Մ. Խրիմյանը:

Տարոնը, Մուշը, Վանը,- գավառահայ ժողովուրդն իր անթիվ-անհամար ցավերով ու վշտերով,- ահա Խրիմյան խմբագրի տագնապների ու մտահոգության առարկան: Աշխատության կարեւոր մի բաժին նվիրված է Հայրիկի գործունեությանը Վարագում, որի վանահայրը դարձավ նա 1857 թ. հունվարին: Սակայն Խրիմյանի ազատաշունչ բարեփոխությունները հանդիպում են ժամանակի կղերականների թե խուլ եւ թե բացահայտ դժկամությանն ու դիմադրությանը: Հալածանքներն ու դավերն այն աստիճան շիկացան, որ թշնամիները վարձկան քրդերի միջոցով մի քանի անգամ փորձեցին սպանել Խրիմյան Հայրիկին: Սակայն մեծ հայրենասերի աննվաճ ոգին մնաց անպարտ ու անբիծ: Խրիմյանը տեղի չտվեց ու չնահանջեց:

Խրիմյան Հայրիկի ժողովրդասիրությունն ու ազգի շահերին անմնացորդ նվիրումն էլ առավել ակնհայտ նկատվեց Տարոնում գործելու տարիներին, երբ Կ. Պոլսի Ազգային ժողովը, անսալով տարոնահայության խնդրանքին, նրան նշանակեց Տարոնի հոգեւոր առաջնորդ եւ Սուրբ Կարապետի վանքի վանահայր: Բացահայտվում են այն հակասությունները, որոնք ծագում են Տարոնի աշխարհիկ եւ հոգեւորական վերնախավի եւ Խրիմյան Հայրիկի միջեւ, ընդ որում՝ ընդգծվում է, որ դա պայքար էր երկու տարբեր սոցիալական խմբավորումների միջեւ. ժողովրդի ծոցից դուրս եկած վարդապետը պայքարում էր ժողովրդի շահերի համար՝ ընդդեմ սեփական եւ այլազգի ցեցերի:

Աշխատության կարեւոր մասերից են «Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքը», «Մկրտիչ Խրիմյանը Վասպուրականի հոգեւոր առաջնորդ», «Ամենայն Հայոց կաթողիկոս» բաժինները, որոնցում բազմանյութ հենքի վրա ներկայացվում են ժամանակաշրջանի քաղաքական ու ազգային անցուդարձը, Խրիմյան հայի, մարդու եւ հոգեւորական-ազգային գործչի հոգեկան տվայտանքներն ու մտահոգությունները, նրա գերմարդկային ճիգերը՝ պաշտպան կանգնելու բոլոր զրկվածներին, հարստահարվածներին, ճնշվածներին:

Է. Կոստանդյանի գրչով մեկ անգամ եւս հառնում է մեծ ազգասերի ու ազատասերի վեհանձն ու տառապալից կերպարը, որը կարողացավ իր բովանդակ կյանքում վեր կանգնել անձնական բոլոր կարգի շահամոլ ու նյութամոլ նկրտումներից, անվայելուչ վարք ու բարքից, փառասիրությունից, պաշտոնապաշտությունից ու երկդիմի, անբարոյական վարքագծից: Նորովի թարմությամբ ու պարզությամբ մեզ է ներկայանում այն Խրիմյանը, որի հայացքը միշտ ու մշտապես հառված էր տառապյալ հայության ծովից ծով կարիքներին ու հոգսերին:

Անգամ շատ հանրահայտ դեպքերն ու իրադարձությունները (Խրիմյանի եվրոպական ուղեւորությունն ու Բեռլինյան ոդիսականը) հեղինակը ներկայացնում է ինքնատիպ, թարմ հարցադրումներով ու գեղեցիկ ոճով:

Ամփոփելով նշենք, որ Էմմա Կոստանդյանի պատմաքննական սույն աշխատությունն ունի խիստ արդիական նշանակություն, քանզի այն բացառիկ խորությամբ հնչեցնում է հայոց պատմության մի ողջ դարաշրջանի մեծ հարցերն ու հարցականները, Խրիմյան Հայրիկի սերունդներին ավանդած դասերն ու պատգամները:

Մենագրությունն ամբողջական երկ է ո՛չ միայն Խրիմյան հայի, կրոնական եւ ազգային անհատականության կյանքի ու գործունեության վերաբերյալ, այլեւ այն ընդգրկուն կերպով ներկայացնում է արեւմտահայության սոցիալ-տնտեսական կյանքի մի ստվար հատվածի, ազատագրական մաքառումների պատմական վերլուծությունը:

***ԱՐՄԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ***
***Պատմ. գիտ. թեկնածու***

# ԺԱԳ ՀԱԿՈԲԵԱՆ

*Եթէ գիտցա՛ր պարտուիլ եսով գիրցած անձէդ վէս,*
*Սիրտըդ ընել սիրաբար այլոց եսին սկահակ,*
*Անոնց գինին ըլլալ դա՛փ կամ արցունքին՝ թաշկինա՛կ*
*Ծաղէ ծաղ սէրըդ բաժնել ու ճաճանչիլ լոյսի պէս.*

*Եթէ կրցա՛ր քու տեսիլքն՝ իբրեւ դրօշ ոսկեղէն*
*Մարդոց աչքին ու սրտին դէմ ծածանել ջահապէս,*
*Ցնծա՛ - տարիդ ապրեցար բազմապատի՛կ, երնէ՜կ քեզ,*
*Զի ինչ որ դուն կը բաշխես՝ ա՛յդ կը շահիս բիւրօրէն:*

*Բայց սրտիդ մեղրն ու գինին եթէ լոկ քե՛զ պահեցիր,*
*Եթէ պալատն օրերուդ դուն չբացի՜ր բնաւին*
*Անօթեւան ճամբորդին, կամ որբուկի կոյր լամբին*
*Չլեցուցի՜ր լամբէդ ձէթ՝ որ ան վառի՜ աստղալիր.*

*Բայց եթէ եսըդ իբրեւ ժայռ կանգնեցիր դեգօրէն՝*
*Եղբայրութեան դէմ մարդոց,- վա՛յ քեզ, տարիդ՝ ու թերեւս*
*Ողջ կեանքդ անդա՜րձ վատնեցիր եւ կորուսիր վերջնապէս,*
*Զի ինչ որ քեզ կը պահես՝ այդ կորուսա՜ծ ես արդէն:*

◆◆◆

*Այսօր, կայքի՛ն հին տարույն եւ նոր տարույն կոյս շեմին,*
*Օ՛ն, նայէ՛ հեղ մը ետեւ՝ ոտնակոխած օրերուդ,*
*Մշակն ինչպէս կը քննէ ցանած դաշտերն ոսկեկոյս,*
*Ճամբորդն ինչպէս կը չափէ ճանապարհած իր ուղին:*

*Նայէ՛ հերկած տարիիդ... Հոն ամայքէ զատ անյուշ*
*Եթէ ոչինչ չգտնես ու չտեսնես հոն շողեր,*
*Դուն ափսոսա՜ ունայնին առջեւ որ կեանքդ է եղեր,*
*Թէպէտ ա՛լ ողբըդ ըլլայ անյուսօրէն զո՜ւր եւ ո՜ւշ...*

*Դիտէ՛ օրերդ ակօսած ի գին սիրո՛յդ լուսածին*
*Ու քրտինքիդ սիրածոր, եւ հրճուէ՛ դուն ի տես*
*Հունձքի՛դ շռայլ ու շքեղ, որմէ հանդերըդ բեհեզ*

*Մերկացուցիր՝ պճնելու մերկ ամբարներն ուրիշին,*
*Որուն հիւղէն խեղճացա՛ր՝ վառելու լամբ մը մթին*
*Եւ գինիովը որուն լեցուցիր սիրտ մը ծարաւ...*

*-Ինչ որ այլոց բաժնեցիր՝ միակ վարձքդ ա՛յդ է, հոգի՛ս...*

*Գահիրէ, 1951*

# «ՍԻՐՈ ՄՈԼՈՐԱԿԻ» հարցը

## Ի՞նչ տեղ ու դեր ունի աղոթքը քո կյանքում:

Պատասխանել են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Մանրանկարչության արվեստի կենտրոնի սաները:

*Ես նկատել եմ, որ երբ ընկնում եմ վատ դրության մեջ ու աղոթում Աստծուն չհուսահատվելով, որոշ ժամանակ անց ամեն բան շատ լավ է լինում:*
*Ես մտածում եմ, որ աղոթքն Աստծու հետ զրուցելու միջոց է. մարդը մտովի խորհրդակցում է Տիրոջ հետ:*

**Սամվել Շահբազյան (12 տ.)**

*Եթե Աստված չլիներ, գոյություն չէր ունենա ոչ մի բան: Աստծու կամքով է, որ մենք ապրում եւ հաղթահարում ենք մեր կյանքի դժվար պահերը: Աստված է, որ մարդուն տվել է շնորհ եւ արվեստ: Ես ամեն առավոտ ու երեկո աղոթում եմ Աստծուն: Աղոթում եմ ոչ միայն նեղության պահին, այլեւ միշտ: Երբ ես մտածում կամ խոսում եմ Աստծու մասին, Աստված ինձ հետ է լինում:*

**Լուսինե Մարտիրոսյան (12 տ.)**

*Քնելուց առաջ ես միշտ աղոթում եմ, քանի որ աղոթքը միակ բանն է, որ աշխարհը կփրկի չարից: Աղոթքի մեջ է բարությունը, որ անհրաժեշտ է մեր կյանքում:*

**Սուսաննա Շահբազյան (14 տ.)**

*Ամեն կիրակի ես գնում եմ եկեղեցի, որ աղոթեմ Աստծուն իմ մայրիկի ու հայրիկի համար:*

**Արմինե Ավագյան (13 տ.)**

*Երբ ես դեռ այնքան էլ չէի հասկանում, թե ով է Աստված, եւ չէի կատարում Նրա պատվիրանները, մի անգամ ստեցի: Սակայն զղջացի ու գնացի եկեղեցի...*
*Մի դեպք պատահեց, եւ ես մեղավոր էի: Աղոթելուց հետո զգացի, որ Աստված շատ ներող է:*
*Աղոթքից հետո ես թեթեւություն եմ զգում, որովհետեւ «կիսվում» եմ մեր Տիրոջ հետ:*

**Հայկուհի Մինասյան (13 տ.)**



«Սուրբ եկեղեցի» (1996 թ.)
ՀՌԻՓՍԻՄԵ ՄԵՐՈԲՅԱՆ (10 տ.)

## ԱՆՎԵՐՆԱԳԻՐ

*Երգում եմ ես,*
*Պարում եմ ես,*
*Ուրախ եմ ես:*

*Մանուկ եմ ես,*
*Անհոգ եմ ես,*
*Ազատ եմ ես:*

*Հայրից եմ ես,*
*Մեզնից եմ ես,*
*Ապստամբ եմ ես:*

*Կանգուն եմ ես,*
*Անհուն եմ ես,*
*Դավիթն եմ ես,*
*Հպարտ եմ ես*

**Դավիթ ԴԱՆՈՅԱՆ (10 տ.)**
**Երեւանի թիվ 142 միջն. դպ.**

**Ուղղում.** «Սիրո մոլորակը» ներողություն է խնդրում իր ընթերցողներից՝ նախորդ համարում տեղ գտած անճշտության համար: Դավիթի «Հիսուս Քրիստոս» բանաստեղծության առաջին եւ 13-րդ տողերում «Նազարեթում» բառի փոխարեն պիտի լիներ «Բեթղեհեմում»:

## ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

Դու՝ մաշտոցյան մտքագիր,
Դու՝ պահապան մեր ազգի,
Դու՝ միտք տվող բառարան,
Դու միակն ես անսասան:
Դու՝ մայրական քնքուշ ձեռք,
Դու՝ հայրական ամրոց, բերդ,
Դու՝ հայկական քարոզ, բառ,
Դու՝ մայրենի լեզու վառ:

**Արթուր ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ (9 տ.)**
**Երեւանի թիվ 82 միջն. դպ.**

## ԱՐԻ՛, ԳԱՐՈՒ՛Ն

Արի՛, գարո՛ւն,
Սիրո՜ւն-սիրո՜ւն,
Ներկիր դաշտը վառ կանաչ:
Արի՛, գարո՛ւն,
Բե՛ր վառվռուն
Ուրախություն անճանաչ:

Եվ թող որ միշտ
Ցնծա հպարտ
Սիրուն դաշտը վառ կանաչ,
Ու թող երգի
Աշխարհը մեր
Ուրախությամբ անճանաչ:

## ԶԱՏԻԿ

Զատի՛կ, զատի՛կ,
Կլո՛ր մատիկ,
Ի՞նչ ես վազում այդպես արագ
Ոտիկներով այդ քո բարակ:

Թռի՛ր, զատի՛կ,
Գարու հատի՛կ,
Թռի՛ր, գնա՛ սարեր, ձորեր,
Գնա՛ ու տե՛ս դու հովիտներ:

**Հասմիկ ԿՈՒՐԱՁՅԱՆ (11 տ.)**
**Ք. Երեւան**
**Մուշեղ Իշխանի անվան**
**թիվ 1 կրթահամալիր**



«Զատիկ»
ԼՈՒԻԶԱ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ (6 տ.)

# «ՍԻՐՈ ՄՈԼՈՐԱԿԻ» ԲՆԱԿԻՉՆԵՐԸ

Անի Հովհաննիսյանին «Սիրո մոլորակի» ընթերցողն արդեն ճանաչում է: Հիշո՞ւմ ես նրա հոգու խոսքը Աստծու երեք բարիքների, Տիրոջ ներկայության, պանդխտության, մոր մասին, նաեւ մի պատմվածք՝ «Հավատը կփրկի աշխարհը» վերնագրով: Այս գրվածքների տողերով քեզ հետ զրուցողը եղել է Անին՝ քո հասակակիցը: Նա սովորում է Վաղարշապատի Խ. Աբովյանի անվան թիվ 4 միջնակարգ դպրոցում: Միաժամանակ «Կանչ» թերթին կից լրագրողների խմբակի սան է: Մինչ այս խմբակի անդամ լինելն Անին լրագրողական դասերի է հաճախել «Հայ միասնության խաչ» բարեգործական կազմակերպությունում, ուր մասնակցում է նաեւ ժողովրդական երգի-պարի թատրոնի դասերին: Չնայած այս զբաղվածությանը, Անին վերջերս ընդունվել է երաժշտական դպրոց. դաշնամուրի դասերը նույնպես հաճույքով է պարապում: Առհասարակ նա սիրում է միշտ զբաղված լինել դասերով: «Զարմանում եմ, որ փողոցում երեխաները շատ են խաղում: Իմ ժամանակն ավելի հետաքրքիր է անցնում տարբեր պարապմունքներով: Իմ զբաղմունքն այն է, որ ես պիտի սովորեմ, պիտի գրեմ... խաղալ էլ եմ սիրում»,- ասում է Անին: Ի դեպ, գրելու փորձեր է արել, երբ դեռ 8 տարեկան էր. ուսուցչուհին հանձնարարել էր մի բանաստեղծություն արտագրել, եւ Անին փոխարենը ինքն է ստեղծագործել: Սակայն նախընտրում է արձակը. ընթերցել եւս, հատկապես պատմավեպեր: Ըստ նրա՝ եթե հայոց պատմություն ու հայ գրականություն չիմանանք, ուրեմն հայ չպիտի համարվենք: Նրա կարծիքով՝ յուրաքանչյուր հայ լավ պիտի իմանա, թե ինչ հաղթանակներ ու պարտություններ են ունեցել մեր նախնիները. չէ՞ որ նախնիներից սովորում ենք: Իսկ իր կարդացածից, դպրո-



ցից, տարբեր խմբակների դասերից ու ընտանիքից Անին մի շատ կարեւոր բան է սովորել, որը երեւի թե ամբողջ կյանքի համար է. այն, որ պետք է կարողանալ ներել ու ներողություն խնդրել անգամ փոքրիկից, եթե մեղավոր ես. որ ներողությունը մեղմում է պատիժը:

«Ի՞նչ երազանք ունես» հարցին ահա թե ինչ պատասխանեց Անին. «Երազում եմ լավ մարդ դառնալ. որ կյանքի հաճույքներն ինձ չչարացնեն՝ նախանձոտ չդառնամ: Զարմանում եմ, երբ տեսնում եմ, որ մարդիկ գողություն են անում ընտանիք պահելու համար, երբ կարելի է աշխատել...»:

*Էջի պատասխանատու՝* **ԱՆՆԱ ԱԼՈՅԱՆ**

